ԷԹՆՈԴԱՒԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ.

Հայաստանի ինչպէս արեւմտեան, այնպէս էլ արեւելեան մասերում էթնոդաւանական իրադրութեան վրայ զգալիօրէն մեծ էր օտար տիրապետողների կողմից վարւող տնտեսական քաղաքականութեան ազդեցութիւնը: Հայ բնակչութեան ոչ բռնի եղանակով մահմեդականացման ընթացքը իրականացւում էր տնտեսական լծակների մի ամբողջ համակարգի օգնութեամբ: Արեւմտեան Հայաստանում, ի թիւս այլ լծակների, յատկանշական էր նաեւ թուրքական «ֆութուվվաթի» քաղաքականութիւնը, երբ «թուրքական տիրապետութեան տակ գտնուող հայկական նահանգներում հայ արհեստաւորները, իրենց արհեստներն ի գործ դնելու իրաւունքին տիրանալու համար, բռնադատւում էին իսլամների հետ միասին անդամակցելու թուրքական արհեստաւորական միաւորումներին, իսկ անդամակցելու համար՝ նրանց նման ենթարկւում էին իսլամական սահմանուած ծիսակատարութիւններին եւ այդ միջոցով՝ իսլամութիւն ընդունելու թելադրանքներին»[1]:

Արեւելեան Հայաստանում տնտեսական միջոցառումների նման համակարգ էր «Իմամ Ջաֆարի» անունով յայտնի օրէնքը, համաձայն որի մահմեդականութիւն ընդունած նախկին քրիստոնեան իրաւունք էր ստանում լիովին ժառանգելու իր քրիստոնեայ ազգակիցների ողջ ունեցուածքը, անկախ ազգակցութեան աստիճանից[2]*: Օրէնքը համառօտ արտայայտուած է հետեւեալ նախադասութիւնում. «Եթէ կայ մահմեդական ժառանգ, անհաւատները (այսինքն՝ քրիստոնեաները - Մ. Կ.) ժառանգութիւնից զրկւում են»: Օրէնքը գործադրութեան պարարտ հող գտաւ ոչ միայն ունեւոր խաւերում*

---

emanatæ. Pars prima. Romæ, Ex Typographia Francisci Caballi, MDCLV [1655], pp. 267-271);

1670-71 թթ. - Պետրոս Պետիկի զեկոյցը (տե՛ս Bedik P. Cehil Sutun, pp. 363-387);

1703 թ. - Ստեփանոս Շիրանի զեկոյցը (SOCG, vol. 544, f. 123-126);

1739 թ. - Սալուինիի զեկոյցը (SOCG, vol. 698, f. 391rv):

1 **Յ. Ս. Անասեան.** *Թուրքական ֆութուվվաթը եւ հայերը (Օսմանեան կայսրութեան ձուլողական քաղաքականութեան պատմութիւնից).* Վիեննա, 1985, էջ 85:

2 *Օրէնքի պաշտօնական ձեւակերպումը պարսկական եւ եւրոպական աղբիւրներում տե՛ս* **Յ. Փափազեան.** *Մեֆեան Իրանի ասիմիլեատորական քաղաքականութեան հարցի շուրջը.* - «Բանբեր Մատենադարանի», 3, Երեւան, 1956, էջ 89-91, Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը. 1, Հրովարտակներ, պրակ երկրորդ (1601-1650 թթ.), կազմեց Յ. Դ. Փափազեան, Երեւան, 1959, վաւ. 16, էջ 101-103: